

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ  
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ՄՈՏ

Ս.

Տիգրան Բ-ի ժամանակ տեղի ունեցած հրեաների երկու գերեվարությունների մասին պատմելիս, Մովսես Պորենացին նշում է, որ գրանցից առաջինը կատարել է ինքը՝ թագավորը<sup>1</sup>, իսկ մյուսը՝ թագավորի հրամանով, նրա զորավարներից մեկը<sup>2</sup>: Երկրորդ գերեվարության նկարագրությունը Պորենացին քննադատել է Հովսեփ Փլարիոսից<sup>3</sup>, ուր սակայն, մտքով է նա լուրջ փոփոխություններ և գործողությունը տեղափոխել մ. թ. ա. 40 թվականից՝ Տիգրանի ժամանակաշրջանը (այսինքն՝ մինչև մ. թ. ա. 56 թ.):

Այս է պատճառը, որ Գր. Պարթյանցը անհավաստի է համարել Պորենացու տված բոլոր տեղեկությունները հրեաների գերեվարության մասին, որքանով գրանք բացակայում են Փալատոս Բուզանդի «Պատմության» մեջ<sup>4</sup>:

Փորձենք սակայն գտնել Պորենացու կատարած փոփոխությունների ու թույլ տված անաքրոնիզմի գրգաղառնությունը և վեր հանել «Հայոց պատմության» այս դրվագի պատմական արժեքը:

Ըստ Պորենացու, հրեաների երկրորդ գերեվարությունը կատարել է հայ նախարար Բարդաիբան Ռշաուհին, որին Տիգրանը նշանակել էր հայպարսկական (այսինքն՝ պարթևական) զորքերի հրամանատար և ուղարկել Ասորիք ու Պաղեստին: Ասորիքի թագավորազնը՝ Պակարոսը, գրգում է սրան խառնվել հրեաների երկրպագություններին և օգնել իրեն՝ նրանց քանանայապետ ու թագավոր Հյուրկանոսին գահընկեց անելու և նրա տեղը նստեցնելու Պակարոսի խնամի Անաիզոսոսին: Դրա փոխարեն Պակարոսը խոստանում է Բարդաիբանին 500 գեղեցիկ կին և 1000 քանքար սակի: Բարդաիբանը համաձայնում է և Երուսաղեմ է ուղարկում հայոց թագավորի տակառապետ Գնեկ Գնուհուն, որին հաջողվում է իր 500 ձիավորների հետ միասին մտնել Երուսաղեմ և համոզել Հյուրկանոսին, որ նա՝ հրեական զորավար Փասանդոսի հետ գնա Բարդաիբանի մոտ քանակցություններ վարելու: Փասանդոսի կզրայրը՝ Հերովդեսը, մնում է քա-

<sup>1</sup> Մովսես Պորենացի, II, ԺԳ, ԺԶ, ԿԵ և III ԼԵ:

<sup>2</sup> Նույնը, II, ԺԺ և III ԼԵ:

<sup>3</sup> Jos. Flav., Bell. Jud., I, 13, 1—11.

<sup>4</sup> Г. Халатяни, Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренского, I, М., 1903, էջ 65—66:

զաքում: Բարդափրանը իր մոտ ժամանած Հյուրկանոսին և Փասակոսին սկզբում քնդունում է սիրալիր, իսկ հետո, կալանավորում է նրանց ու հանձնում քահանայապետություն տենչող Անտիգոնոսին: Վերջինս կրծում է Հյուրկանոսի տկանջները, որպեսզի սա, խեղանդամ լինելով, այլևս չկարողանա քահանայապետ մնալ (քահանայապետները ըստ կանոնի պետք է ողջանդամ լինեին): Փասակոսը ինքնասպան է լինում գլուխը քարին զարնելով:

Մինչ այդ, տակառապետը Երուսաղեմում ջանում է իր ձեռքը դցել Հերովդեսին, բայց սա փախչում է եղոմացիների մոտ: Հայկական զորքերը մտնելով Երուսաղեմ, հափշտակում են Հյուրկանոսի ամբողջ ունեցվածքը՝ 300 քանքար արժողությամբ, բայց ուրիշ ոչ մի բանի ձեռք չեն տալիս: Անտիգոնոսը դառնում է քահանայապետ: Հայկական զորքերը, գերելով Հյուրկանոսին ու Մարիսա քաղաքի բնակչությանը, վերագառնում են Հայաստան: Տիգրանը հրամայում է Բարդափրանին՝ գերված հրեաներին բնակեցնել Շամիրամի քաղաքում (Վանում):

Հետագայում, Տիգրանի եղբայր Արշամի օրոք<sup>1</sup>, նախարարներից մեկը, հրեա Ենանոսը, հրապուրվելով 100 քանքար ոսկի փրկագնով, արձակում է Հյուրկանոսին և դրա համար պատժվում Արշամի կողմից: Հյուրկանոսը վերագառնում է Հրեաստան, ուր սակայն սպանվում է թագավոր դարձած Հերովդեսի հրամանով:

Սորենացու այս նկարագրությունն մեջ մի շարք կետեր չեն համապատասխանում նրա սկզբնագրյալին: Նախ և առաջ, ինչպես նշեցինք, ըստ Հովսեփոսի, գեպքերը տեղի են ունեցել մ. թ. ա. 40 թվականին, իսկ ըստ Սորենացու՝ Տիգրան Բ-ի օրոք: Այնտեղ գործում են պարթևական զորքերը, այստեղ՝ հայ-պարթևական: Պարթևական սատրապ Բարդափրանային փոխարինել է հայկական նախարար Բարդափրան Ռշտունին. պարթևական Պակորոս (Բակուր) արքայազնը Սորենացու մոտ չի հիշատակվում. նրա փոխարեն Պակարոս է անվանված Ասորիքի արքայազնը, որը Հովսեփոսի մոտ ներկայանում է որպես Լիսանիոս, Լիրանանի մոտերքում գրանրվող Քաղկիսի թագավոր: Պարթևական տակառապետ Պակորոսը (Բակուր) վերածվել է հայկական տակառապետ Գնել Գնունու: Պարթևական զորքերը, ներս խուժելով Երուսաղեմ, ըստ Հովսեփոսի, ամեն ինչ թալանում են, բացի Հյուրկանոսի ունեցվածքից, իսկ ըստ Սորենացու՝ հայկական զորքերը միմիայն Հյուրկանոսի ունեցվածքն են հափշտակում: Ըստ Հովսեփոսի Հյուրկանոսին գերի են տանում պարթևները և բնակեցնում Բարելոնում, ըստ Սորենացու՝ հայերը բնակեցնում են նրան Վան քաղաքում, գերի վերցրած մարիսացիների հետ միասին: Ի դեպ, վերջինների գերության մասին Հովսեփոսը ոչինչ չի ասում:

Վերջապես, ըստ Հովսեփոսի, Հյուրկանոսը ազատություն է ստանում Բարելոնի հրեաների՝ պարթևների թագավոր Փրատակոսին (Հրահատ) ուղղրված խնդրանքով<sup>2</sup>, իսկ ըստ Սորենացու՝ նրան ազատ է արձակում հայկական նախարար հրեա Ենանոսը, որը չի հիշվում Հովսեփոսի մոտ:

<sup>1</sup> Մովսես Սորենացի, II, ԻԳ:

<sup>2</sup> Jos. Flav., Bell. Jud. I, 22, 1.

Պետք է ասել, որ Հովսեփոսի այս պատմածում հայերն ու Հայաստանը բնդհանրապես չեն հիշատակվում:

Մնացածը այս երկու պատմածներում բնդհանուր է: Համընկնում են, մանավանդ, թվական տվյալները և տեղանունները:

Մովսես Խորենացու թույլ տված շեղումների մի մասը բացատրվում է, հավանորեն, իր աղբյուրի անգիր օգտագործմամբ: Այդպիսի շեղում է, օրինակ, Լիսանիոսին Պակարոս անուն տալը, որի հեռեանքով անունից զրկվել են երկու անձնավորություն՝ պարթևական արքայազնը և պարթևական տակառապետը, առաջինը մոտացություն է արվել, իսկ երկրորդը՝ նոր անուն ստացել: Նույն ձևով կարելի է բացատրել Հյուրկանոսի ունեցվածքի համընկնումն առաջին եղած անձնությունը: Այս ենթադրությունը չի հակասում թվերի ճիշտ հաղորդմանը, թվերը կարող էին գրի առնված լինել:

Սակայն նման մի բացատրություն մնացած շեղումների համար, ինչպիսիք են՝ պարթևների փոխարինումը հայերով (այդ թվում՝ պարթև սատրապի փոխարինումը հայ նախարարով) և Հյուրկանոսին Հայաստան բերելու մասին տեղեկությունը, իհարկե, չի կարող բավարար համարվել: Այս շեղումներն արված են միանգամայն գիտակցաբար:

Անշուշտ Մովսես Խորենացին սրտը հիմք ունեցել է հիշյալ շեղումները կատարելու համար, այս ստիպված է բնդունել անգամ Գր. Խալաթյանցը<sup>1</sup>, որովհետև Փափսոս Բուզանդը պատմելով հայկական քաղաքների բնակչություն (նույն թվում՝ հրեաների) 4-րդ դարում կատարված բռնի գաղթի մասին գեղի Պարսկաստան, գրում է. «Չայս ամենայն քաղաքիս հրեից, զոր գերեցին տարան յերկրէն Հայոց, ամեալ էր յերկրէն Պաղեստինացւոց մեծի թագաւորին Հայոց Տիգրանայ ի ժամանակին՝ յորժամ գերեաց նա և ամ ի Հայս գրահանայապետն հրեից զՀյուրկանիոս զառաջին ժամանակաւ: Եւ էաժ մեծ արքայն Տիգրան զամենայն զհրեութիւնն զայն բնակեցոյց ի քաղաքսն Հայոց յիւրում դարուն ի ժամանակին»<sup>2</sup>:

Ոչ մի հիմք չկա Բուզանդի այս տեղեկությունը վերագրելու նրա՝ Հովսեփոսի գրքին ծանոթ լինելուն, որովհետև եթե նա ծանոթ էլ լիներ (որ համարյա թե բացառված է), չէր կարող այնանգից նման տեղեկություն քաղել, քանի որ այդպիսին այնտեղ չկար<sup>3</sup>:

Ակնհայտ է ուրեմն, որ նման մի ավանդություն, բայց որի Հյուրկանոսը Հայաստան է բերվել, Բուզանդի օրոք գոյություն է ունեցել Հայաստանում:

Ակադ. Հ. Ա. Օրբելին բանավոր հաղորդել է մեզ, որ դեռևս 20-րդ դարի սկզբում Վանի շրջակայքի գյուղացիները Վան քաղաքի բնակիչներին հրեա էին համարում, և նրանց բնակեցումը այդտեղ վերագրում էին Տիգրան թագափորին: Հնարավոր է, իհարկե, որ այս ավանդությունը

<sup>1</sup> Г. Халатянц, Армянские Аршакиды, 1, էջ 65:

<sup>2</sup> Փափսոս Բուզանդ, IV, ԾԵ:

<sup>3</sup> Գր. Խալաթյանցը (նույն տեղում, էջ 66) այնուամենայնիվ կարծում է, որ Փափսոսի այս տեղեկությունը վերջին հաշիվով ծագում է Հովսեփոսի այն հաղորդումից, բայց որի Հյուրկանոսը, Բարկոնում եղած ժամանակ մեծ հեղինակություն է վայելել նաև անդրեփրատյան հրեաների մոտ: Այս «անդրեփրատյան» բայց հատկացվելով Հայաստանում որպես «հայկական», հիմք է հանդիսացել, բայց Գ. Խալաթյանցի, Հյուրկանոսի Հայաստանում բնակեցվելու մասին ստեղծված ավանդության: Այսպիսի բացատրություն մեզ կամայական է թվում:

դրքային, մատենագրական ծագում ունենա, բայց մեզ ավելի հավանական է թվում, որ դա արձագանքն է այն ավանդության, որն իր ժամանակին օգտագործել է Փափստոսը:

Իր սեպի հիմքը կորցրած ավանդության պահպանումը այդչափ երկար ժամանակի ընթացքում, բացատրվում է, հավանորեն, նրանով, որ այն հետագայում ստացել է սոցիալական հիմք, այն է՝ բոլոր անտագոնիստական հասարակարգերում գյուղի և քաղաքի միջև մշտապես եղած հակասությունները:

Ինչ և իցե, հիշյալ ավանդության առկայությունը Ծ-րդ դարում հայկական հողի վրա անժխտելի է: Հարց է ծագում, թե որտեղից է գալիս այս ավանդությունը: Հակառակ Գր. Խալաթյանցի կարծիքի<sup>1</sup>, մեզ թվում է, որ այդ ավանդության աղբյուրը պետք է փնտրել Հովսեփոսի կողմից չհիշատակված ինչ որ իրադարձությունների մեջ:

Մենք միանգամայն հավանական ենք համարում ակադ. Հ. Մանանդյանի այն ենթադրությունը, թե մ. թ. ա. 40 թվականի արշավանքին պարթևական զորքի կազմում մասնակցել է նաև հայերի մի ջոկատ, ուղարկված Տիգրան Բ-ի որդի, պարթևների դաշնակից Արտավազդ Բ-ի (մ. թ. ա. 56—33 թթ.) կողմից: Ավարի մի մասը, այդ թվում և գերիները մի մասը, ստացել են հայերը և Հայաստան վերադառնալիս իրենց հետ բերել (երկրորդ գերեվարություն)<sup>2</sup>:

Մեզ թվում է, թե հենց այս ձևով պետք է բացատրել Հայաստանում այնպիսի մարդկանց հայտնվելը, որոնք Հյուսիսային գերեվարությանը աղանատես են եղել: Սրանց պատմածները հետագայում մշակվել են հրեական այն հոժ րնակչության ուղորտում, որը Հայաստան էր գաղթեցվել դեռևս Տիգրան Բ-ի ժամանակ: Արտավազդն ու պարթևները մոռացության են արվել և ամեն ինչ վերագրվել է Տիգրանին, մի հանգամանք, որը բացատրվում է վերջինիս ժողովրդականությամբ:

Այսպիսով՝ Մովսես Խորենացին, Հյուսիսային գերեվարության պատմությունը շարադրելիս, իր առաջ ունեցել է երկու վերսիա — Հովսեփոսի հաղորդածը և հայկականը: Նման դեպքերում Խորենացին միշտ հետևել է այն վերսիային, որը գրվատում է հայերին ու բարձրացնում նրանց գերը պատմական իրադարձություններում: Հենց այդ ճանապարհն է բռնել հեղինակը նաև ներկա դեպքում: Նա նախընտրել է հայկական վերսիան և Հովսեփոսի պատմածը հարմարեցրել է այդ վերսիային: Իրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ Խորենացին, ընդհանուր առմամբ հետևելով Հովսեփոսի պատմածին, ամենուրեք, սակայն, պարթևներին փոխարինել է հայերով, ընդ որում իրական պատմական դեմքերը՝ պարթև սատրապ Բարգամարնան և տակառապետ Պակորոսը վերածվել են ոչ սեպ պերսոնաժների՝ հայ նախարար Բարգամարի մշտունու և տակառապետ Գնել Գնունու, առաջացել է մի նոր պերսոնաժ՝ Ենանոս Բագրատունին, պարթևական արքայազն Պակորոսը անհետացել է և այլն:

Որտեղից է առել Խորենացին հայկական վերսիան: Արդյոք Փափստոսից, թե անմիջապես ժողովրդական աղբյուրից:

<sup>1</sup> Տես նախորդ ծանոթագրությունը:

<sup>2</sup> Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. эры—XV в. н. эры), Ереван, 1954, էջ 84:

Մեզ համար կասկածից վեր է, որ կամ՝ Խորենացին ներկա գեպքում ավելի լրիվ է օգտագործել հայկական ավանդությունը, քան Փավստոսը, կամ, եթե այդ ավանդությունը սահմանափակված է եղել Փավստոսի մոտ եղած տվյալներով, ապա Խորենացին ունեցել է Փավստոսից բացի, մի այլ գրավոր կամ բանավոր, հավաստի աղբյուր:

Բանն այն է, որ Խորենացին տալիս է երկու այնպիսի տեղեկություն, որոնք չկան Փավստոսի մոտ: Նախ՝ նա տարբերում է երկու գերեվարություն (Փավստոսը գիտե միայն մեկը, որի մեջ խառնված են երկուսն էլ)<sup>1</sup>, և ապա նշում է, որ երկրորդ գերեվարության ժամանակ բերված հրեաները բնակեցվել են հատկապես Վան քաղաքում (Փավստոսը միայն ընդհանուր ձևով հիշում է Վանը հրեական բնակչություն ունեցող քաղաքների թվում): Բայց ստույգ են արդյոք այս տեղեկությունները:

Որ երկրորդ գերեվարությունը իրական փաստ է, և ոչ Խորենացու հորինածը, այդ ասպացուցվում է Հյուբերկանոսի մասին հայկական ավանդության առկայությամբ. ինչ վերաբերում է այդ գերիների բնակեցմանը Վան քաղաքում, ապա այս ևս վերին աստիճանի հավանական է:

Վերջինենք նախ Խորենացու տվյալները:

Իր ստեղծած տակառապետ Գնելին Խորենացին համարում է Գնունի տոհմին պատկանող և սա պատահական չէ. Խորենացին, անշուշտ, հենվում է այն իրական (կամ՝ իրեն իրական թվացող) փաստի վրա, որ հայոց թագավորներին գինի մատակարարողները միշտ Գնունի տոհմից են եղել, և «Գնունի» անունն էլ ծագում է հենց «գինի» շառից<sup>2</sup>: Նույն ձևով է վարվել նա, համարելով իր ստեղծած հայ նախարար Բարդափրանին Ռշտունի տոհմից: Սա ևս պատահական չէ և պետք է հենված լինի այն իրական փաստի վրա, որ երկրորդ գերեվարության հրեաները բնակեցվել են (Խորենացու կարծիքով այդ կատարել է Բարդափրանը) Վան քաղաքում, որը սահմանակից էր Ռշտունիների երկրին և գտնվել է նրանց ազդեցության ներքո:

Խորենացին հայտնում է նաև հետևյալ հետաքրքիր փաստը. Հայաստանի բոլոր հրեաները 4-րդ դարի սկզբում քրիստոնեություն են ընդունել, բացառյալ Վան քաղաքի հրեաներից, որոնք պահել են իրենց կրոնը (վերջին փաստը անհայտ է Փավստոսին)<sup>3</sup>: Սրա պատճառը պարզ կլինի, եթե ընդունենք, որ իսկապես երկրորդ գերեվարության հրեաները բնակեցվել են Վանում: Լինելով ըստ Պաղեստինից, այդ հրեաները շատ ավելի նվազ չափով պետք է ենթարկված լինեին հելլենիզմի ազդեցությանը և ավելի ամուր կառչած իրենց կրոնին, քան Հայաստանի մյուս քաղաքներում բնակեցված հրեաները, որոնց Տիգրան Բ-ը բերել էր ոչ թե Պաղեստինից, այլ Ասորիքից ու Միջագետքից:

Բացի սրանից, պետք է նշել, որ Տիգրան Բ-ի գերեվարությունների մասշտաբները հսկայական էին<sup>4</sup>, իսկ Արտավազդինը՝ շատ ավելի փոքր,

<sup>1</sup> Հմմտ. Մ. Արևիյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ, էջ 563: Հեղինակի կարծիքով Փավստոսը տեղյակ է միայն երկրորդ գերեվարությանը:

<sup>2</sup> Մովսես Խորենացի, II, է:

<sup>3</sup> Նույն տեղում, ԼԵ:

<sup>4</sup> Տե՛ս Դ. Саркисян, Градостроительство в Армении при Тигране II и вопрос о переселении чужестранцев. ՀՍՍՐ ԳԱ Տեղեկագիր, Հաս. գիտ., 1955, № 2, էջ 49—51:

համապատասխան այն համեատ գերին, որ կարող էր կատարել հայկական ջոկատը մ. թ. ա. 40 թվականի իրադարձություններում: Այս ժամանակ բերված գերիները կարող էին բնակեցվել միայն որևէ մեկ քաղաքում: Ամենայն հավանականությամբ այդ քաղաքը կզել է Վանը և պատահական չէ, որ հրեաների գերեզմարության մասին հնագույն ավանդությունը պահպանվել է մինչև 20-րդ դարը հենց Վանի շրջանում:

## Բ.

Փափառոս Բուզանդի և Մովսես Խորենացու մոտ կա Շապուհ Բ-ի կողմից Տիգրանակերտի պաշարման ու գրավման նկարագրությունը<sup>1</sup>: Փափառոսի մոտ այն շատ հակիրճ է, և նրա բոլոր հիմնական տվյալները առկա են Խորենացու բնագրձակ և մանրամասն նկարագրության մեջ: Վերջինս պարունակում է նաև մի շարք բառացի բնագործակալություններ Կեղծ-Կալիսթենեսի «Վարք Ալեքսանդր Մեծի» վեպի հայերեն թարգմանությունից, հատկապես Ալեքսանդրի կողմից Տյուրոս քաղաքի պաշարման և Թերեք քաղաքի առման նկարագրությունից: Այս բնագործակալությունները առիթ են ծառայել անհավաստի համարելու նաև այն տվյալները, որոնք Խորենացու մոտ ինքնուրույն են<sup>2</sup>: Խորենացու նկարագրության մեջ արժանահավաստ գանձեր փորձեր էլ են կելի<sup>3</sup>, բայց դրանք չեն բնութանվել, և Գր. Խալիսթյանցը կարող կերպով ծխակ է Խորենացու տվյալների արժեքը<sup>4</sup>:

Հարցը, սակայն, արժանի է թվում հետագա ուսումնասիրության:

Դիմենք Խորենացու բնագրին: Կեղծ-Կալիսթենեսից բնագործակալած տեղերը բնագրված են<sup>5</sup>:

(III, ԻԶ) «Իսկ Շապուհ գայ հառանկ ի Տիգրանակերտ մեր քաղաք: Կան բնորդէմ նորա արք քաղաքին հանդերձ գումարաակ զնդաւ. քանզի Անտիոք նահապեա Սիւնեաց, որ էր աներ Արշակայ և վերակացու քաղաքին, հրամայեաց ազխել բնորդէմ Շապուհ: Եւ ոչ միայն զմուտն արգել, այլ և ոչ հրեշտակս առարեաց առ նա և ոչ զնորայն բնկալա: Եւ հզօր կուռոյ եղելոյ՝ զբազումս ի Պարսիցն սպանանեն. և ի պարտութիւն մաանեալ զնդին Շապուհ, զառնայ անդրէն ի Մծրին. և հանգիստ առեալ զօրացն և արժարձեալ յաշխատութենէն, խնդրէր առնուլ զՏիգրանակերտ. և ոչ թողացուցին նմա յառաջախաղաց գունդք և լրտեսք՝ պատաղել զայնու, իբր թէ Յունացն խանդարեացի գործ: Եւ Շապուհ յառաջ անցեալ՝ զրէ առ նոսա թուղթ օրինակ գայս:

<sup>1</sup> Փափառոս Բուզանդ, IV, ԻԳ, Մովսես Խորենացի, III, ԻԶ, ԻԸ:

<sup>2</sup> Ա. Սուքրյան, Երեսնամեայ պատերազմ ի Հայս և կատարած Արշակայ արքային, «Բազմավեպ», 1887, էջ 8—11:

<sup>3</sup> Գ. Սարգսյան, Տեսութիւն Մարբրասեան աւանդութեան ըստ Մ. Խորենացու, «Բազմավեպ», 1883, էջ 118—119:

<sup>4</sup> Գ. Халатянц, Армянские Аршакиды, I, էջ 244—246:

<sup>5</sup> Խորենացու և Կեղծ-Կալիսթենեսի տեքստերի համեմատությունը տես Հ. Տաշյանի «Ուսումնասիրությունը Ստոյն-Կալիսթենեսայ Վարուչ Ալեքսանդրի» (Վիեննա, 1892) աշխատության մեջ (էջ 60—66): Տես նաև Գ. Халатянц, Армянские Аршакиды, II, էջ 93—94:

«Մաղղեղանց քաջ Շապուհ արքայից արքայ. Տիգրանակերտեայց, որք ոչ ևս էք անուանելոց ի մէջ Արեայց և Անարեայց:

Ես կամէի ի ձեռն յսկսեալ յամենայն առաջիկայ քաղաքս խաղաղութեամբ և բաշօրէն ազատութեամբ զմուսն առնել, և երէ դուք Տիգրանակերտեայք, որ առաջին էք, ոչ շահատակութեամբ առնեմ, այլ ի մտէ ուղևորութեանս, ընդդէմ կացէք ինձ՝ ի ձեռն ուսցին և այլք զդոյն առնել: Այլ ի դարձին իմում բարկութեամբ այնպէս վանեցից զձեզ, զի կրկին եղիջիք օրինակ խեղեղ ստահակից»:

(III, ԻԸ) «Իսկ Շապուհ եկեալ ի Տիգրանակերտ, դարձեալ ազխեցին ընդդիմանալ նմա. և ելեալ ի պարիսպն աղաղակէին. «Գնա ի մէնջ, Շապուհ, զի մի չարիս յերկրորդումս ընդ քեզ առաւել ևս քան զառաջինն անցուցանիցեմք պատերազմաւ»: Եւ նա պատասխանեաց. «Ո՛վ քաջք ի հայոց, որք զանձինս արգելեալ փակեցէք ընդ պարսպօրդ Տիգրանակերտի և արտաքս ձայն արկանէք սպանալեաց. զի քաջ արանց է յարձակ դաշտի և յազատ տեղոջ կոտել, և կանանց գործ է արգելուլ փակել զինքեանս յերկուրէ առ հանդերձեալ կոխան»: Եւ զայս ասացեալ՝ դարձաւ առ գերեալ Յոյնսն զինաւորս, ասէ. «Եթէ ձերով մարտիւ առից զայս քաղաք՝ զամենեան զձեզ արարից ազատս հանդերձ ընտանեօք ձերովք»: Եւ պարսկական զօրուն շուրջ զքաղաքան հրամայեաց ընթանալ, և նեախք խոցուել զի վերայ պարսպին:

Եւ Յունացն մատուցեալ մեծաւ բռնութեամբ յեցուցին ի պարիսպն զկոչեցեալ էջսն: Եւ է այս գործի մերենայից ամուսնոր, յերից երից արանց մղելով տարեալ, և ի ներքուստ կացնովք և սակրօք երկրերանովք և կոցափօր մրնովք՝ փորել զնիմունսն: Եւ նգախարխար արարեալ զայն, որ ի հայկազնոյն Տիգրանայ հոծեալ և յարմարեալ որմունքն, քակեալ ընկեցին. և հուր ի դրունսն և յամենայն կողմանսն վառեալ, և քարինք և նեաք և տէգք արձակեալ լինէին, և խօցոտեալ մերքն յապուշ գառնային: Եւ ի ներքս մտեալ բոլոր զօրքն՝ և ձեռն պարսկական ոչ վաստակէր զբազմախողխող երկաթն արեամբ արբուցանել, մինչև սպաժոյծ սպանելոցն լցեալ ի հիմունս ծաւալէր: Այլ յունականն ձեռն ի քթթել ական հրձիգ առնէր զամենայն փայտակերտան: Եւ Շապուհ զմնացեալսն ի կատորածէն գերեալ՝ չուէ ի Պարսս. և հրեշտակս առ որ ի Հայս գունդք առաքեալ՝ անպայազատ զՄիւնեացն հրամայէ առնել զառնմ»:

Բերված տեքստում կան «Վարք Ալեքսանդր Մեծի» վկայից ընդօրինակած մի շարք բառեր, դարձվածքներ և անգամ նախադասություններ ու հատվածներ. հատկապես Շապուհի նամակը տիգրանակերտացիներին մեծ չափով կրկնությունն է Տյուրսի բնակիչներին ուղղված Ալեքսանդրի նամակի:

Փորձենք, սակայն, ուշադրությունը կենտրոնացնել ոչ թե համընկնող տեղերի վրա, այլ այն տեղերի, որոնք ինքնուրույն են և աարբերում են Խորենացու նկարագրությունը կեղծ-կալիսթենեսի նկարագրությունից, և կաեսնենք, որ հենց դա է կազմում Խորենացու պատմածի էությունը, անհասականություն տալիս նրան: Ընդհակառակը, ընդօրինակված տեղերը կամ առանձին բառեր են, կամ ընդհանուր ոճեր, կամ, վերջապես, հսկողական դարձվածքներ, որոնցով կարելի է բնութագրել ամեն մի քաղաքի ամեն մի պաշարում:

Թորենացու՝ Կեղծ-Կալիսթենեսից անկախ տված տեղեկությունների մի մասը, ինչպես ասացինք, կա նաև Փալատոսի մոտ. որանց հավաստիության հարցը, ուրեմն, դուրս է մնում մեր թեմայից: Այդպիսի տեղեկությունների թվին են պատկանում պարսիկների կողմից Տիգրանակերտի գրավման փաստը, Շապուհ թագավորի ներկայությունը պարսկական զորքում, քաղաքի ավերումը և բնակչության գերեվարությունը:

Թորենացու Կեղծ-Կալիսթենեսի հետ առնչություն հունեցող մյուս տեղեկությունների մասին դժվար է ասել, թե իսկապես նրանք վերաբաղում են Տիգրանակերտի առումը Շապուհի կողմից: Բանն այն է, որ քացի Փալատոսի տվյալներից, այդ իրադարձության մասին ուրիշ զուգահեռ աղբյուրներ չկան:

Սակայն եթե տվյալներ չկան այդ տեղեկությունների կոնկրետ-պատմական հավաստիությունը կամ անհավաստիությունը որոշելու համար, ապա մեր ձեռքի տակ կան այնպիսի աղբյուրներ, որոնք թույլ են տալիս քննարկելու այդ տեղեկությունների ընդհանուր-պատմական հավաստիության հարցը, այսինքն թույլ են տալիս որոշելու՝ այդ տեղեկությունները հնարովի են, թե՛ համապատասխանում են պատերազմ վարելու այն մեթոդներին ու ձևերին, որոնք բնորոշ էին Շապուհ Բ-ի համար և Հայաստանի քաղաքների սոցիալ-քաղաքական դրությունը 4-րդ դարի կեսերին:

Մեր ակնարկած աղբյուրներն են՝ Ամմիանուս Մարկելլինուսի «Պատմությունը» և Տիգրանակերտի հունարեն արձանագրությունը:

Ամմիանուսը տալով 50—60-ական թվականների հոսմա-պարսկական պատերազմների նկարագիրը, տվյալներ է հաղորդում նաև Շապուհ Բ-ի կողմից քաղաքների պաշարման ու առման մասին<sup>1</sup>: Ամիգ քաղաքի պաշարման ժամանակ,— պատմում է հեղինակը,— «Ճակատագիրը ներշնչել էր չափազանց գոռոզացած արքային, որ նրա երևալուն պես պաշարվածները սարսափած կղիմեն նրան, ազաչելով խնայել իրենց»: Սպասածին հակառակ, քաղաքի պարիսպներին մոտեցած Շապուհի և նրա շքախմբի վրասկսել են նեաներ տեղալ: Սաստիկ գայրույթով լցված արքան սպառնացել է քաղաքը հողին հավասարեցնել: «Գլխավոր զորավարները խնդրում էին արքային, որ նա տեղի չտա գայրույթին, հետ չկանգնի իր փառավոր նպատակներից»: Շապուհը համաձայնվում է առաջարկել պաշտպաններին, որ նրանք անձնատուր լինեն: Սակայն ուզարկված դեսպանությունը նորից հանդիպում է նեաների տարափի, ընդ որում սպանվում է Շապուհի գաշակից թագավորներից մեկի որդին: Երկար և դաժան պաշարումից հետո, բազմաթիվ զոհեր տալով, պարսիկները վերջապես գրավում են քաղաքը և շատերին գերի վերցնում:

Մինգարայի պաշարման ժամանակ Շապուհը հասնելով քաղաքին, սկզբում փորձում է իր կողմը գրավել պաշտպաններին բանակցության միջոցով, բայց անհաջող: Մեկ օր հանգստանալուց հետո, «զորքերը շրջապատեցին քաղաքը: Զինվորներից ոմանք սանդուխքներ էին կրում, մյուսները կարգի էին բերում պաշարման մեքենաները, իսկ հիմնական մասը ֆաշինների և հարձակողական վահանների պաշտպանության ներքո աշխատում էին մոտենալ պարիսպներին, հիմքերը քանդելու նպատակով»:

<sup>1</sup> Аммиан Марцелин, История, перевод с латинского проф. Ю. А. Кулаковского, выпуск 1, Киев, 1906, стр. 247—265.



Մի քանի օր տևող մարտերից հետո պարսիկներին հաջողվում է քանդել աշտարակներից մեկը և ներս խուժել քաղաք: «Այստեղ ու ալնաեղ կային սպանվածներ, բայց՝ փոքրաթիվ. (կենդանի) մնացածները Սապորի (Շապուհի — Գ. Ս.) հրամանով գերի վերցվեցին և տեղափոխվեցին Պարսկաստանի ամենահեռավոր կողմերը»:

Բեղարդայի պաշարման ժամանակ ևս Շապուհը մոտենում է պարսպաներին, բայց այստեղ էլ պաշտպանները նետաձգություն են սկսում: «Սակայն նա զսպում է իր ցասումը և, ըստ սովորության, գեսպաններ ուղարկելով, աշխատում է համոզել պաշարվածներին, որ նրանք իրենց կյանքը խնայեն, կանխեն պաշարումը անձնատուր լինելով, բացեն քաղաքի դռները, դուրս գան և խոնարհարար հանձնվեն ժողովուրդների հաղթողին: Գեսպանները խիզախորեն մոտեցան պարսպաներին, բայց պարսպաների վրա գտնվող պաշտպանները նետեր չէին արձակում, որովհետև գեսպանները իրենց առջևից տանում էին պաշտպաններին ծանոթ ազատածնունդ մարդկանց ու գերիներին, որոնք գերված էին Սինգարայի տակ»:

Այնուամենայնիվ բանակցություններն ասպարդյուն են անցնում և պարսկական զորքը միօրյա հանգստից հետո, սկսում է պաշարումը: Մի քանի օրից հետո պարսիկները գործի են դնում հսկայական բարանք, որը «շնորհիվ արտակարգ ճիգերի իր ահագին սայրով սկսեց քանդել քարերի կապը, խարխուլեց աշտարակներից մեկը և շուտ ավեց այն»: Պարսիկները խուժում են քաղաք ու մեծ կոտորած անում, չխնայելով կին ու երեխա: «Նրանք ցնծալով վերադարձան իրենց վրանները, բազմաառևանակ ավարով ծանրաբեռնված և տանելով առջևից գերիների հսկայական ամբոխը»:

«Ավելի ու ավելի գոռոզանալով, Թագավորը հույս ուներ տիրանալ իր ճանապարհին ընկած ամեն մի քաղաքի: Մի քանի աննշան ամբուլթյուններ գրավելուց հետո նա մոտեցավ Վիրտային: «Թագավորը զանազան միջոցների էր դիմում, մերթ աշխատում էր պաշտպաններին իր կողմը գրավել, մերթ՝ սպառնում իր սարսափելի սպառիժներով»: Սակայն այս անգամ, տեսնելով, որ պաշարումն անօգուտ է, Շապուհը հետ է քաշում իր զորքերը»:

Տեղի սղության պատճառով ննարավոր չէ ավելի մանրամասն բերել Ամմիանուսի նկարագրությունները, բայց այսպիսի խիստ կրճատված վիճակում էլ նրանք մեծ նմանություն են ցուցաբերում Խորենացու պատմածին:

Անգամ կարծիքներ են եղել, որ Խորենացին օգտվել է Ամմիանուսից և նկարագրել է նենց Ամիգի պաշարումը<sup>1</sup>:

<sup>1</sup> Բ. Սարգսյան, Տեսություն Մարիրառայան ավանդության, «Բաղմավես», 1883, էջ 118: Հեղինակը համոզված է, որ Տիգրանակերտը հենց Ամիգն է: Այսպիսի տեսակետ դրսևություն է ունեցել հայադիտության մեջ նախքան Լեհման-Հաուպտի կողմից այն փաստի հաստատումը, որ Տիգրանակերտը գտնվել է ներկայիս Ֆարկինի տեղում (C. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, Berlin, 1910, էջ 381—429, 501—523): Տիգրանակերտը և Ամիգը նույնացնելու տենդենցը գալիս է միջնադարից, սակայն Փափասոսի մոտ այն դեռևս չի նշմարվում: Փափասոսը, պատմելով Տիգրանակերտի պաշարման մասին Շապուհի կողմից, հազորում է, որ Տիգրանակերտը գտնվում էր Քի գառաին Աղձնեաց (IV, ԻԴ): Թվում է թե Խորենացին, որ լրիվ օգտագործել է Փափասոսի այս հատվածը, նույնպես պետք է հեռու լիներ Տիգրանակերտը Ամիգի հետ շփոթելուց:

Եթե նույնիսկ ընդունենք այս տեսակետը, հենվելով այն փաստի վրա, որ Ամմիանուսը իր՝ 4-րդ դարի 50—60-ական թվականների սրատերազմների մանրամասն նկարագրության մեջ չի հիշում Տիգրանակերտի առումը Շապուհի կողմից, այնուամենայնիվ սրանով չի ժխտվում, այլ հաստատվում է այն փաստը, որ Թորենացու ռեալ ազդյունքը, բացի Փավստոսից, եղել է 4-րդ դարի սրատուժյունը շարադրող մի երկր: Թվում է սակայն, որ հիշյալ նմանութունը ավելի շուտ բացատրվում է ոչ թե ընդօրինակութուններով՝ Ամմիանուսից, այլ մի կողմից երկու հեղինակների նկարագրութունների ընդհանուր օրյեկտով՝ քաղաքի պաշարումով, մյուս կողմից այն պատճառով, որ նրանց մեջ արտացոլվել են Շապուհ Բ-ի վարած սրատերազմների բնորոշ առանձնահատկութունները:

Իրանց թվին է պատկանում, անշուշտ, Շապուհի համար կանոն դարձած գիմուսը պաշարվող քաղաքներին՝ հանձնվելու առաջարկությամբ, որ հանդիպում է վերը հիշատակված բոլոր դեպքերում: Իհարկե, նման առաջարկներ արվել են քաղաքների պաշարման հետ առնչվող բոլոր սրատերազմներում, բայց Շապուհի մոտ այս կանոնը մի հատուկ իմաստ էր ստացել, դարձել էր արտահայտութուն Շապուհի այն խոր համոզմունքի, որ բոլոր քաղաքները պետք է խոնարհվեն իր ուժի առջև: Այդ մի շարք անգամ ընդգծում են և՛ Ամմիանուսը, և՛ Թորենացին:

Վերջինիս պատմածի յուրահատկութունն այն է, որ Շապուհը գիմուս է պաշարված քաղաքին ոչ թե բանավոր, այլ՝ գրավոր: Բայց այստեղ ոչ մի անհնարին բան չկա: Հայտնի է 3-րդ դարի վերջին (կամ 4-րդ դարի սկզբին) պատկանող մի իսկահան փավերագիր՝ Տիգրանակերտի հունարեն արձանագրութունը, որը հենց մի թագավորական նամակ է, ուղղված Տիգրանակերտ քաղաքին<sup>1</sup>: Ճիշտ է, դա հայոց թագավորի նամակն է, բայց սրանով հարցի էութունը չի փոխվում. այստեղ կարևոր է քաղաքին գրավոր հիմելու հնարավորութունը, որը պայմանավորված է եղել քաղաքի հատուկ պետական-իրավական վիճակով, այն է՝ նրա կիսաինքնավար գրությամբ<sup>2</sup>:

Թեև Շապուհի նամակը, ինչպես արդեն նշեցինք, հիմնականում կրկնութունն է Ալեքսանդրի նամակի, սակայն պետք է ասել, որ նրա առնչվող մի կետը՝ սրատից թագավորի տիրոսը, փավերահան է: Նամակը սկսվում է այսպես. «Մագդեզանց քաջ Շապուհ արքայից արքայ, Տիգրանակերտեայց, որք ոչ ևս էք անուանելոց ի մէջ Արեայ և Անարեայ»:

Հունարեն մի արձանագրութունից հայտնի է Շապուհ Ա-ի տիրոսը. 'Εγὼ Μασδαάσσης θεός Σαπώρος βασιλεύς βασιλέων 'Αρριανῶν καὶ 'Αναρριανῶν<sup>3</sup>. «Ես Մագդեզն աստված Շապուհ արքայից արքա Արայ և Անարայց»: Եթե հաշվի չառնենք այն, որ Թորենացին «Արիք և Անարիք» բառերը այլ կանտեքստի մեջ է գրել, ապա այստեղ միայն մեկ էական տարբերութուն կա.

<sup>1</sup> C. F. Lehman-Haupt, Eine griechische Ynscherift aus der Spätheit Tigranokerta s. «Klio», VIII, 1908, էջ 497—520. նույնի Armenien einst und, jetzt, էջ 416—417:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Խ. Տարկեսյան, Из истории городской общины в Армении (IV в), «Вестник древней истории», 1955, № 3, էջ 49—50:

<sup>3</sup> E. Honigmann et A. Maricq, Recherches sur les Res gestae divi Saporis. Academie Royal de Belgique, classe des lettres et des sciences morales et politiques. Հատոր XLVII, գրառ 4. Bruxelles, 1953, էջ 11, սող 1:

Յեօ՛ճ Շաստված» բառը փոխարինված է «քաջ» բառով: Բայց քրիստոնյա պատմիչի համար, որը ոչ մի անգամ Շաստված» անունը չի շնորհում ոչ միայն մանկանացուներին, այլև հեթանոսական՝ հայկական կամ օտար աստվածներին, այսպիսի փոխարինումը միանգամայն բնական է:

Շապուհ Բ-ի վարած պատերազմների մի այլ բնորոշ կողմն էլ եղել է, հավանաբար, գերի վերցրած հակառակորդների օգտագործումը քաղաքների պաշարման ժամանակ: Այստեղ էլ պետք է նշել, որ Շապուհը ոչ առաջինն էր, ոչ էլ՝ վերջինը, այդ մեթոդին դիմողներից: Բայց դժվար թե պատահական լինի այն փաստը, որ սաղմագերիների օգտագործման մասին հիշատակում են Ամմիանուսը, և՛ Խորենացին, ընդ որում Կեղծ-Կալիսթենեսի մոտ գրա մասին ոչ մի ակնարկ չկա: Ծիշտ է, օգտագործման ձևը փոքր ինչ տարբեր է. Ամմիանուսի մոտ գերի հոսմեացիները (Խորենացու մոտ նրանք կոչվում են հույներ) մասնակցում են պաշարմանը պասսիվ ձևով, իսկ Խորենացու մոտ՝ ակտիվ: Բայց պայմաններն էլ տարբեր են. մի դեպքում պաշարված է հուսեական քաղաք, մյուս դեպքում՝ հայկական:

Նշենք, վերջապես, Շապուհի վարած պատերազմների համար բնորոշ մի երևույթ և՛ գրավված քաղաքների բնակչության գերեվարությունը Պարսկաստան: Այս երևույթը հանդիպում է և Ամմիանուսի, և Խորենացու, և մի քանի անգամ Փավստոսի մոտ, երբ վերջինս նկարագրում է Տիգրանակերտի ա. յոթ այլ քաղաքների առումը պարսիկների կողմից<sup>1</sup>: Հիշենք ի դեպ, որ Կեղծ-Կալիսթենեսի մոտ այդ մասին ոչինչ չկա:

Եթե դառնանք այժմ Խորենացու տված այն տեղեկություններին, որոնք բնութագրում են Տիգրանակերտի ներքին կյանքը, ապա կհամոզվենք, որ սրանք ևս արտացոլում են պատմական իրողությունը:

Ըստ Խորենացու տվյալների, քաղաքը պաշարած Շապուհին ընդդիմացել են Շարք քաղաքին հանդերձ գումարտակ գնդաւ. քանդի Անտիոք..., վերակացու քաղաքին, հրամայեաց աղխել ընդդէմ Շապուհ: Տեքստի այս մասը ոչ մի աննշույթյուն չունի «Վարք Ալեքսանդր Մեծի» վեպի հետ, ուր Տյուրոս քաղաքի պաշտպաններն անվանված են լսկ «Տիւրացիք»: Դժվար է ասել, թե սրանցից է վերցրել Խորենացին այս տվյալները, բայց նրանք դարմանալիորեն համապատասխանում են 4-րդ դարի հայկական քաղաքի մասին այն պատկերացմանը, որ ստեղծվում է Տիգրանակերտի հուշարեն արձանագրության տվյալների հիման վրա: Այս հարցը հանգամանորեն լուստարանված է մեր մի աշխատության մեջ<sup>2</sup>: Այստեղ նշենք միայն, որ Շարք քաղաքին» գրանք Տիգրանակերտի քաղաքացիներն են, քաղաքացիների աշխարհագրը, «գումարտակ գունդն» արքայական քաղաքապահ զորամասն է, որ սահմանվել էր Տիգրանակերտում գեոևս Տրդատ Գ-ի օրոք: Վերջապես «վերակացու քաղաքին» Անտիոքը թագավորական մի գործակալ էր Տիգրանակերտում. նման պաշտոնյաները կարևոր օղակ էին հանդիսանում թագավորի և քաղաքների փոխհարաբերություններում և մի քանի դար ավելի վաղ, հելլենիստական շրջանում, գործում էին Հայաստանին սահմանամերձ հելլենիստական երկրներում և Պարթև Արշակունիների մոտ՝ ἐπιστάτης կոչման տակ, որ բառացի հենց «վերակացու» է նշանակում:

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, IV, ԻԳ, ԾԵ:

<sup>2</sup> Դ. Մ. Տարկեսյան, Из истории городской общины в Армении, ВДИ, 1955, № 3.

Այսպիսով, համեմատելով Մովսես Թորենացու «Հայոց պատմութեան» մեջ պահպանված՝ Տիգրանակերտի գրավման նկարագրութիւնը 4-րդ դարի հալաստի աղբյուրների հետ, տեսնում ենք, որ Թորենացու հաղորդած տեղեկութիւնները այնպիսի բնույթ ունեն, որ լրիվ չափով կարող են վերաբերվել 4-րդ դարի կեսերին Հայաստանում տեղի ունեցած իրադարձութիւններին և հետևաբար առնված են այդ ժամանակաշրջանի պատմութիւնը շարագրող աղբյուրներից: Այս հետեւութեանը ամենևին արգելք չի հանդիսանում այն փաստը, որ որոշ տեղերում Թորենացու տված նկարագրութիւնը երևան է գալիս Կեղծ-Կալիսթենեսից բնօրինակից աճական հագուստով: «Վարք Ալեքսանդր Մեծի» վեպը օգտագործվել է Թորենացու կողմից ոչ որպէս Հայաստանի 4-րդ դարի պատմութեան աղբյուր, այլ միմիայն որպէս աճական և հստատրական նյութի մի շահմարան: Միանգամայն պարզ է, թե ինչու Թորենացին այդ նյութը հայթայթելու համար դիմել է հատկապէս Կեղծ-Կալիսթենեսին: Ապացուցված է, որ «Վարք Ալեքսանդր Մեծի» վեպի հայերեն թարգմանութեան հեղինակը եղել է հենց ինքը՝ Մովսես Թորենացին<sup>1</sup>:

\* \* \*

Մովսես Թորենացու «Հայոց պատմութեան» երկու այս գրվագների ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ դրանք շարագրելին հեղինակը չի գրադվել պատմութեան հորինելով, այլ միշտ հիմնվել է որևէ օրյակաթի տվյալի վրա: Այս փաստը միանգամայն ակնհայտ կլինէր առանց հատուկ ուսումնասիրութեան, եթե Թորենացին լինէր սոսկ կոմպիլյատոր և շարագրեր իր հալաքած նյութերը մեկը մյուսի հետեից, առանց խմբագրելու: Սակայն նա կոմպիլյատոր չէ, այլ գիտնական, և ոչ միայն խմբագրել է իր ձեռքի տակ եղած տվյալները, այլև հետազոտել ու մշակել իր ժամանակի գիտութեան մակարդակի համեմատ և արել է իր հետեւութիւնները: Արանով չափազանց բարդանում է Թորենացու «Պատմութեան» ուսումնասիրողի գործը, որովհետեւ նախ՝ Թորենացին հաճախ ճիշտ չի կողմնորոշվել բաղդատելիս իր տվյալները, որոնց նշանակալից մասը, օրյակաթի լինելով հանդերձ, անհալաստի է (օրինակ՝ Հյուրկանոսի մասին հայկական տվյալագրութիւնը) և, երկրորդ, որոշ գեղաբերում շատ դժվար է որոշել, թե որտեղ է վերջանում նյութի շարագրութիւնը և որտեղից են սկսվում հեղինակի հետեւութիւնները:

Այսպիսով պարզ է, թե որքան անհրաժեշտ է Թորենացու աղբյուրների օգտագործման ու մշակման ձևերի ու մեթոդների ուսումնասիրութիւնը:

<sup>1</sup> Հ. Տաշյան, Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենեսայ վարուց Ալեքսանդրի վիեննա, 1892, էջ 42—84: